## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«03» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 124

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Եղիազար Բաղդասարյանի սեփականության իրավունքով իրեն պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղի Ազատամարտիկների խճուղի թիվ 2 հասցեի բնակավայրերի կառուցապատման հողակտորում ինքնակամ իրականացրել է հասարակական շինության կառուցման շինարարական աշխատանքներ, **որոշում եմ.**

1.Քաղաքացի Եղիազար Բաղդասարյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Եղիազար Բաղդասարյանին ՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Գառնի համայնքի բյուջեի N 900105207105 հաշվին:

3.Պարտավորեցնել Եղիազար Բաղդասարյանին, դադարեցնել շինարարական աշխատանքները՝ մինչև համապատասխան նախագծային փաստաթղթեր ներկայացնելը և շինարարության թույլտվություն ստանալը:

4. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Եղիազար Բաղդասարյանին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Եղիազար Բաղդասարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. մարտի 03

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«04»ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 125

## ԱՁ ՆԻԿՈԼ ԶԱՔԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ, ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով հիմք ընդունելով ԱՁ Նիկոլ Պետրոսյանի հայտը ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր բնակավայրի 3-րդ փողոց թիվ 74 հասցեում գործող ԱՁ Նիկոլ Պետրոսյանին տալ թույլտվություն 2022թ. հունվարի 01-ից մինչև սույն թվականի մարտի 31-ը մանրածախ առևտրի կետում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. մարտի 04

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«04»ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 126

ԱՁ ԿԱՐԻՆԵ ԺՈՐԱՅԻ ԱՊԻՆՅԱՆԻ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Կարինե Ապինյանի հայտը անդորրագիր N 420831254 ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր բնակավայրի 2-րդ թաղամաս թիվ 4 հասցեում գործող ԱՁ Կարինե Ապինյանին տալ թույլտվություն 2022 թվականի հունվարի 01-ից մինչև սույն թվականի մարտի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի վերաբերյալ:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. մարտի 04
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«04»ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 127

### ԱՁ ԿԱՐԻՆԵ ԺՈՐԱՅԻ ԱՊԻՆՅԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով հիմք ընդունելով ԱՁ Կարինե Ապինյանի հայտը անդորրագիր N2025456162 ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր բնակավայրի բնակավայրի 2-րդ թաղամաս թիվ 4 հասցեում գործող ԱՁ Կարինե Ապինյանին տալ թույլտվություն 2022թ, հունվարի 01-ից մինչև սույն թվականի մարտի 31-ը հանրային սննդի կազմակերպման և իրացման վերաբերյալ:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. մարտի 04
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«04»ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 128

### <<ՍԵԳԱՁ >> ՍՊԸ-Ի ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ, ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով հիմք ընդունելով <<ՍԵԳԱՁ >> ՍՊԸ-ի հայտը ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր բնակավայրի 2-րդ թաղամաս թիվ 22 հասցեում գործող <<ՍԵԳԱՁ >> ՍՊԸ-ի տալ թույլտվություն 2022թ. հունվարի 01-ից մինչև սույն թվականի մարտի 31-ը մանրածախ առևտրի կետում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. մարտի 04

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«04» ՄԱՐՏԻ 2022ԹՎԱԿԱՆԻ. N 129

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ՝***

1. Ֆլորա Ենգոյանի և Աիդա Ղազարյանի կողմից փաստացի օգտագործվող՝ 07-021-0062-0022 ծածկագրում, 0.10081 հա հողամասի սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. մարտի 04

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«04» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 130

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37 հոդվածի 3-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ՝***

1. **Գառնի համայնքի 2022 թվականի սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:**
2. **Հաստատել Գառնի համայնքի 2022 թվականի սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:**
3. **Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Գառնի համայնքի ղեկավարի օգնական Մարիամ Հովհաննիսյանին:**
4. **Հանձնարարել Մարիամ Հովհաննիսյանին՝ համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում, և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին:**
5. **Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ, հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը:**

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. մարտի 04

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 04- Ի
N 130 ՈՐՈՇՄԱՆ

Սույնով Գառնիի համայնքապետարանը հրավիրում է բոլոր, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց, մասնակցելու 2022 թվականի մարտի 7-ից մինչև մարտի 18-ը կայանալիք սուբվենցիաների ծրագրերի՝ այդ թվում, Գառնի համայնքում Ապաստարանների նորոգում,Քլորակայանի կառուցում և ջրագծերի անցկացման (Գառնի, Գեղարդ, Հացավան, Գեղադիր գյուղերում) վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:
Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված սուբվենցիաների ծրագրերի վերաբերյալ կարող են մինչև մարտի 18-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնել համայնքի համացանցային կայքում (kotayk-garni.am) կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով (garni.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Գառնիի համայնքապետարան:
Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան Գառնի համայնքում՝ 2022 թվականի մարտի 18-ին, ժամը 16:00-ին, <<Գառնիի Գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ ՝ Ստ. Շահումյան 11, 2-րդ հարկ՝ նիստերի դահլիճ:
Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 041-12-51-56 հեռախոսահամարներով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«07» ՄԱՐՏԻ 2022ԹՎԱԿԱՆԻ. N 131

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով ***որոշում եմ՝***

1.Վահե Արամի Գևորգյանի սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գողթ գյուղի 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 12/3 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Գարսևան Խաչատրյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վահե Արամի Գևորգյանի որոշման ընդունման մասին իրազեկվելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. մարտի 07

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«07» ՄԱՐՏԻ 2022ԹՎԱԿԱՆԻ. N 132

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ՝***

Գառնի համայնքում Անյա, Գոհար, Նազանի և Արտակ Ալոյաններին համասեփականություն համարվող տնամերձ հողամասին ծածկագիր 07-021-0028-0065 և նրա վրա կառուցված շինությանը տրամադրել հասցե համաձայն բաժանման սխեմայի ։
S 1= 0.1340 հա մասին գ.Գառնի Մ. Սարյան փողոց տուն 8
S 2= 0.0600 հա մասին գ.Գառնի, Մ. Սարյան փողոց տուն 8/1
Ուժը կորցրած համարել Գառնի համայնքի ղեկավարի 2021թվականի մայիսի 10-ի N 131 որոշումը

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. մարտի 07

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

<<09>> ՄԱՐՏԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 133

## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 68-րդ հոդվածի 1-ին մասով **որոշում եմ՝**

1. Ստեղծել հողերի մշտական գործող աճուրդային և վարձակալության հանձնաժողով հետևյալ կազմով՝

   1)Աճուրդի կազմակերպիչ՝ Համայնքի ղեկավար Տիգրան Պողոսյան

Անդամներ՝ Համայնքային ղեկավարի առաջին տեղակալ՝ Կարեն Գաբրիելյան,

Համայնքային ծառայության քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետի ժ/Պ՝ Արտակ Նազարյան,

Համայնքային ծառայության քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժ/Պ՝ Գարսևան Խաչատրյան,

Համայնքային ծառայության քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետի ժ/Պ՝ Վիրապ Կարապետյան,

Ավագանու անդամ՝ Ալիկ Ալոյան,

2. Հանձնաժողովի կազմում նշանակել աճուրդավար՝ Կարեն Գաբրիելյան,
   արձանագրող՝ Գարսևան Խաչատրյան,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. մարտի 09

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

«09» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 134

### ԳՈՒՅՔԻ ՄԵՋ ՉԱՓԱՀԱՍ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐԲԱԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքը ընդունելով Գառնի համայնքի Խնամակալության և Հոգաբարձության հանձնաժողովի 01.06.2020թվականի արձանագրությունը և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ՝***

1.Թույլտվություն՝ Հայկանուշ Ջանիբեկի Ստեփանյանին /ծնված 02.01.1962թ./ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի մեջ՝ Գառնի համայնքում գտնվող հողամասի /ծածկագիր՝07-021-0336-0001/ համասեփականատերեր Անդրանիկ Գուրգենի Ստեփանյան /Ծնված 18.06.1989թվականի/ Արբակ Գուրգենի Ստեփանյան / Ծնված 23.08.1984 թվականի / պատկանող բաժնեմասերը վաճառելու համար ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Համայնքի ղեկավար      Տ. Պողոսյան

2022թ. Մարտի 9-ի
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

<<09>> ՄԱՐՏԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 135

## ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԵՐԳԵՅԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ***.

1.Քաղաքացի Մարգարիտա Սերգեյի Սիրունանյանի սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղի Րաֆֆու փողոց թիվ 2/1 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2260147 վկայականում նշված պարիսպը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարգարիտա Սերգեյի Սիրունանյանի որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. մարտի 09

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«09» ՄԱՐՏԻ 2022ԹՎԱԿԱՆԻ. N 136

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով ***որոշում եմ՝***

1. Մարգարիտա Սերգեյի Սիրունանյանի սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գողթ գյուղի Րաֆֆու փողոց թիվ 1/2 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Գարսևան Խաչատրյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարգարիտա Սերգեյի Սիրունանյանի որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. մարտի 09

գ.Գառնի